Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ 2026-2027 ՈՒՍՏԱՐԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

011401.11.6 «ԿԵՐՊԱՐՎԵՍՏ»

Ուսուցումը երկաստիճան է՝ բակալավրիատ և մագիստրատուրա:

«Կերպարվեստ» բաժնի շրջանավարտները ստանում են մանկավարժության բակալավրի, ուսուցչի որակավորում:

Բակալավրիատի ուսուցման տևողությունը չորս տարի է: Կերպարվեստի բաժին կարող են ընդունվել նրանք, ովքեր ունեն ընդհանուր միջնակարգ կրթություն, նկարչական ունակություններ ու հմտություններ, որոնք համապատասխանում են ընդունելության քննությունների պահանջներին:

Դիմորդը պետք է հանձնի մասնագիտությունից երկու քննություն՝ «Գծանկար» և «Գունանկար»:

«Գծանկար» առարկայի քննության ժամանակ հանձնարարվող առաջադրանքը նատյուրմորտ է՝ հարթ ֆոնի վրա 2-3 գիպսե առարկաներից, գրաֆիտե մատիտով պարզ լուսավորությամբ՝ Ա2 (594x420) ֆորմատի թղթի վրա: Հանձնարարության կատարմանը տրվում է 8 ակադեմիական ժամ 2 օր՝4- ական ժամ):

«Գունանկար» առարկայի քննության ժամանակ հանձնարարվում է 2-3 կենցաղային առարկաներից կազմված նատյուրմորտ, ջրաներկով Ա2 (594x420) ֆորմատի թղթի վրա, կատարման տևողությունը՝8 ակադեմիական ժամ (2 օրում, 4-ական ժամ):

ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

«Գծանկարից» - Բնօրինակից ճիշտ տեղադրումը թղթի վրա, համաչափությունների ճշգրիտ արտահայտում, տրված լուսավորության պայմաններում արտահայտել ծավալները և տալ բնօրինակի նմանության բնութագիր:

«Գունանկարից» - Բնօրինակից ճիշտ տեղադրումը թղթի վրա. գունային, տոնային և ծավալային հարաբերությունների ճշգրիտ արտահայտումը տարածության մեջ:

Քննության ներկայանալիս դիմորդը իր հետ պետք է ունենա.

1. Նկարչական տախտակ Ա2 ֆորմատի թղթի համար (60x40 սմ),
2. Նկարչական Ա2 ֆորմատի 2 թերթ (գծանկարի և գունանկարի համար),
3. Գրաֆիտե սև մատիտներ՝ չոր, միջին և փափուկ տեսակների,
4. Ռետին, սրիչ, կոճգամներ,
5. Ջրաներկ, ջրաներկի վրձիններ՝ տարբեր չափերի, փորձաթղթեր, ջրամաններ:

011401.11.6 «ԿԵՐՊԱՐՎԵՍՏ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

«ԳԾԱՆԿԱՐ»

1.	Թղթի մեջ առաջադրանքի ճիշտ տեղադրում և չափի որոշում	0-5 միավոր
2.	Առաջադրանքի կազմող առարկաների և նրանց մասնիկների համաչափությունների արտահայտում:	0-5 միավոր
3.	Աշխատանքում լուսաստվերային, ծավալային խնդիրների և հեռանկարի արտահայտում	0-5 միավոր
4.	Առաջադրանքը կազմող առարկաների նյութականության արտահայտումը և գրաֆիկական կատարողական կուլտուրան:	0-5 միավոր

Ընդամենը 20

«ԳՈՒՆԱՆԿԱՐ»

1.	Թղթի ֆորմատի և դիրքի ճիշտ ընտրությունը ըստ առաջադրանքի և առարկաների փոխհարաբերության խնդիրների լուծումը:	0-5 միավոր
2.	Առաջադրանքում ընդհանուր գունային գամմայի ճիշտ ընտրությունը (կոլորիտ):	0-5 միավոր
3.	Նյութականության և գունային լուծումների ճիշտ արտահայտում:	0-5 միավոր
4.	Կատարողական կուլտուրան և նյութի հետ վարվելու վարպետությունը:	0-5 միավոր

Ընդամենը 20 միավոր

011401.11.6 «ԿԵՐՊԱՐՎԵՍՏ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1-ին քննություն «Գծանկար»

2-րդ քննություն «Գունանկար»

Երկու քննությունների ընթացակարգերը նույնատիպ են: Քննությունները անցկացվում են յուրաքանչյուր երկու օրում 4-ական ակադեմիական ժամ տևողությամբ:

Տվյալ օրվա քննության բոլոր դիմորդները քննասենյակներում իրենց տեղերը զբաղեցնում են վիճակահանությամբ: Երկրորդ օրվա քննության ավարտից հետո բոլոր աշխատանքները հավաքվում, ծածկագրվում են պատասխանատու քարտուղարի կողմից և հանձնվում առարկայական քննական հանձնաժողովի նախագահին գնահատման համար:

Գնահատման ավարտից հետո կատարվում է աշխատանքների ապածածկագրում և գնահատականները փոխանցվում են քննական ամփոփաթերթի մեջ: